



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Աստղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

"506 1658-6

ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք



# ԱՐՅԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՅԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՃՐԴԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.



25

20

25



ԳՐԱՎԵՏՎԵՐՆԵՐԻ ԲԱԼՈՒ ՅԵՐԿՐՎԵՐԻ ՄԱՍԻՆ

# ԱՐՅԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՅԵԿ

ՍՊՅԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6804

A II  
23949

Թարգմ. Գ. ԲԱԼԱԽՈՎԱՆ




ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀԱՆԴԻԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 73

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.



## ԳԼՈՒԽ IX

# ԱՐՀԵՍՏԱԿՑԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ՍՈՑԻԱԼԾԿԱՆ ԱՊԱՀՈՎԱՐԴՐՈՒԹՅՈՒՆԸ

I. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱ-  
ՐԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱՐԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՑԵՎ  
ԱՊԱՀՈՎԱՐԴՐԱՇԽԵՐԻ ՇՐՋԱՆԸ

Հոկտեմբերյան Հեղափոխության հետևանքով ԽՍՀ Միու-  
թյունում պետական իշխանությունն անցավ բանվորական գասա-  
կարդի ձեռքը, վորի չնորհիվ և սոցիալական առահովագրության  
ամբողջ գործը դրվեց բոլորովին այլ հիմքերի վրա:

Մեր որենսդրությունը (Աշխորենսգիրք, հոդ. 176-ի) նա-  
խառնում է բանվորի առահօվությունը բոլոր այն դեպքերում,  
յերբ նա իրենից անկախ պատճառներով և արտագրության բնույթի  
և պայմանների "հետևանքով զրկվում է (կորցնում է) իր  
զատումից : Ահա և այդ պատճառով է, վոր մեր սոցիալական ա-  
ռահօվագրության գործը այնպիս է կազմակերպած, վոր ընդուն-  
կում է սոցիալական ապահովագրության հետևյալ տեսակները .

ա) Բժշկական լրակատար ոգնություն (բուժաբանային, հի-  
վանդառոցային և մասնագիտական) թե՝ ապահովագրված բանվոր-  
ներին ու ծառայողներին, և թե նրանց բնաւանիքների ոնաշնչառու-  
նակ անդամներին :

բ) Նպաստ ժամանակավոր անայնառունակություն դեպքում  
(հիվանդության, խեղանդամության, քարանտինի, հղության,  
ծննդարերության, բնաւանիքի հիվանդ անդամին խնամելիութեամբ է ըստ հշտության) .

կ) Հրացուցիչ նպատակ ծննդաբերության գեղքում նորածին ժամկանը խնամելու համար անհրաժեշտ իրերը զնելու (ժամկան սեփակ) և յերեխային կերակրելու համար (աննոցադրում) ու նպատակ, ազահովագրվածի կամ նրա խնամքին ապրող բնաւոնիքի տնկումի մահվան գեղքում (թազման նպատակ) .

դ) Նպատակ գործազրկության գեղքում .

յ) Կենսաթոշակ վարձու աշխատանքում կամ նրա հետեւանքով խեղանդամացած բանվորներին և ծառայողներին .

զ) Կենսաթոշակ վարձու աշխատանքում կամ նրա հետեւանքով արհեստակցական հիմանդրացումներից անաշխատունակ դորձած բանվորներին և ծառայողներին .

և) Կենսաթոշակ աշխատանքի մեջ բնոհանուր հիմանդրացումների կամ զառամության հետեւանքով աշխատունակությունը բնովմիչա կորցրած բանվորներին ու ծառայողներին (աշխատանքի անկարներին) .

ը) Կենսաթոշակ մահացած կամ անհայտ կորած ապահովագրմանների բնաւոնիքների անաշխատունակ անդամներին .

թ) Կենսաթոշակ վաստակավոր լուսայիսատագորներին (ուսուցիչներին և ուսուցչունիներին) :

Այսքան ընդարձակի և բազմակողմանի ապահովագրություն, վորոն բնոդդրկի ապահովագրական բիսկի բոլոր տեսակները, աշխարհին յերեխին գոյություն չունի և վոչ մի յերկրում, բացի ԽՍՀ Միությունից: Բացի այդ մեզնում սոցիալական ապահովագրությունը տարածվում է մարդկանց ավելի լայն շրջանի վրա, բայց վորեւ այլ յերկրում: Աշխարհնագիրը նախատեսնում է, վոր զայտարական ապահովագրությունը տարածվում և վարձու աշխատանքում զրագված բոլոր անձանց վրա, ուր եւ վոր զրագված լինի նրանք, պետական հասարակական, կոռպերատիվ կոնցեսախոն, վարձակալական, խառն կամ մասնավոր մեռնարկություններում, հիմնարկություններում կամ տնտեսություններում թե մասնավոր անձանց մոտ, անկախ նրանց կատարած գործի բնույթից և անոցաթյունից ու նրանց վարձատրելու յեղանակից» (Հոդ. 475-ըլ):

Վորագեայի ավելի պարզ զաղափար կազմել այն ժաման, թե վորքան հաստատուել և ապահովված ԽՍՀՄ աշխատավորներին ապահովագրական ոգնությունը, բայց ական և նշել նաև ոյն հանգու-

մանքը, վոր նույնիսկ յեթե ձեռնարկությունները, հիմնարկությունները, տնտեսությունները և առանձին անձինք չառաւցանեն լորենցից պահանջմող ապահովագրական վճարները, այդ բնագիտիսի զրկելու նրանց մոտ վարձով աշխատավորներին խորհրդային տպահովագրական որենսդրությամբ սահմանված ապահովագրութեան ոգնություններ ստանալու իրավունքից :

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային ապահովագրական որենսդրությունը սահմանելու նպաստների հետեւյալ հիմնական չափերը, ժամանակավոր անոշխատունակության դեպքում աշխատավորը ապահովում է աշխատանքից (արձակուրդ և ստանում բռնժելու համար) և ստանում է իր նախկին աշխատավարձը (դատումը) սկսած հիմանդրանալու տոմաջին որից մինչև առողջանալու կամ ժահվան որը, իսկ Առրաջինը ձրի բուժողնություն է հասցնում Այս. Ազահով. գանձարկդի հաջոյնին : Եեթե այս կամ այն աշխատավորը վարձու աշխատանքից հետ կապված վորեկե գերախոտ պատահարի յենթարկվեց և մարմնի վիճովածք կամ ջարդվածք ստացավ, նու իր ժամանակավոր անոշխատունակության ամրող ընթացքում ապահովվում է իր լրիդ դատումով ինչպես և հիմանդրանալու ժամանակ իսկ կայուն անոշխատունակության՝ հաշմանդամության գեպքում ապահովվում է կենսաթշակով համեմատ իր աշխատավարձի և կորցրած աշխատականություն չափի :

Եեթե վորեւ աշխատավորի ընթացքում վարակիչ հիմանդրություն և պատահում, վորի հետեւանդով աշխատավորը պիտի մեկուսացվի (առանձնացվի), վորպեսզի իրեն շրջապատողներին չփարակի և հիմանդրության տարծաման պատճառը դառնա, սանիւտարական հօգողություն պահանջով նա մեկուսացվում է և նրա վիճակացի մեկուսացման ամրող ընթացքում ստապեանձարկդը նպաստ և տալիս նրան նրա լրիդ դատումի չափով :

Ինչպես մենք զիտենք արդեն (գլ. 8-րդ) Փիզիքական աշխատանքով դրազված կանայք հղության ժամանակ արձակուրդ են ստանում 8 շարաթ տեղությամբ մինչև ծննդաբերությունը և 8 շարաթ ել ծննդաբերությունից հետո, իսկ մտավոր աշխատանքով դրազված կանայք նույն արձակուրդը ստանում են Յական շարաթ տեսզությամբ : Այդ արձակուրդի ժամանակ նրանց նախկին գատու-

մի շափով նպաստ և տալիս սոցազգանձարկղը Ցննդարերությունից  
հետո յել սոցազգանձարկղը միանվագ նպաստ և տալիս (վարչ  
կումար) «մանկան ու խոի» համար, այսինքն նորածին յերեխայի  
համար սպիտակեղեն, վերժակ և այլ անհրաժեշտ իրերը գներու-  
համար: Բացի այդ սոցազգանձարկղը 9 տօնիս շարունակ նպաստ և  
տալիս (անողազրամ) յերեխային կերակրելու և ուժեղացրած որ-  
նունդ տալու համար: Յեթե աշխատավորի ընտանիքի անդամներից  
մեկը ծանր հիվանդացել և և տանը նրան ուրիշ խնամող չկա, վորի  
հետևանքով հիվանդությունը կարող և բարդանալ, իսկ հիվան-  
դանոցում տեղավորելը անհնար և, առա այդպիսի դեղքերում ել  
աշխատավորին՝ ուրծակուրդ և արվում եր հիվանդին խնամերու-  
համար, իսկ այդ ժամանակամիջոցի համար նրա լրիվ գատումը  
վճարում և պարձյալ սոցազգանձարկղը: Այն դեղքում, յերբ չեռ-  
նում և աշխատավորի: Խնամքին ապրող բնատանիքի անաշխատու-  
նակ անողամբ՝ Հայրը, Ժայրը, ամբուսինը, զավակը, քույրը կամ  
յեղբայրը, նու զարձյալ սոցազգանձարկղից հարսուկ նպաստ: Ա-  
սոնանեմ թաղման համար: Իսկ ապահովագրվածի մահվան դեպ-  
քում թաղման նպաստ և ոտանում նրա քնտանիքը:

Գործարիսության զետքում սոցազգանձարկղը նպաստ և առա-  
լիս, վորի չափը կապ ունի գործազուրկի վորակի և նրա ընտանե-  
կան դրության հետ: Սոցազգանձարկղները նաև մասնակցում են  
դործազուրկներին աշխատանքային ոգնությունն հասցնելու գործի-  
կազմակերպմանը (հասարակական աշխատանքներ, աշխատանքի  
կողեկտիվներ և այլն կաղմակերպելուն, վորպիսի աշխատանքը  
առնում և Աշխաղկոմատը):

Աշխատանքի անկարները սոցազգանձարկից վարոշ չափի կեն-  
սաթոշնակ են ստանում, նայած թե ի՞նչի հետևանքով են անկար-  
գտուել: Խեղանդամության, արհեստական հիվանդացումի, թե  
ընդհանուրը: Հիվանդության և գառամության և թե ի՞նչ չափով են  
կորցրել իրենց աշխատանակությունը: Աշխատանքի անկարներն  
իրավունք ունին պահանջելու, վոր սոցազգանձարկղը կենսաթո-  
շակի փոխարեն, նրանց տեղավորին հաշմանդաբերի համար կադ-  
մակերպած: Հասուեկ հանրակացարաններում: Մահացած ապահովա-  
գրվածների ընտանիքները կենսաթոշակ են ստանում ընտանիքի  
անաշխատունակ անդամների թվի համեմատ:

## ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերևում առաջ բերված համառոտ ցուցակից անդամ պարզ յերեսում է, թե ի՞նչումն և կայանում մեր սոցիալական ապահովագրության բուն եյությունը :

Մեր սոցիալական ապահովագրության կոչումն ու նպատակն և սովորով աշխատավորին, յերբ նա հիմանգության, հաշմանդության, քարանտինի և այլ պատճառների հետևանքով հարկադրված և դադարել աշխատելուց և կամ յերբ նա հակառակ իր կամքի և ցանկության զրկվում և գործից :

Սոցիալական ապահովագրությունը, աշխատավորին բժշկական սովորությունն հասցնելով և նրա դատումը ապահովելով, պահպանում և աշխատավորի բանվորական ուժը մեր ժողովրդական անտեսության դործը կազմակերպելու համար։ Գործադրիության ժամանակամիջոցում նպաստավորելով աշխատավորին, պաշառպանում և նրան այլառերվելուց և փրկում աղքատությունից և մուրացկանությունից։ Թուղակավորելով ծերունիներին և տկարներին սոցիալական ապահովագրությունը ադատում և ժողովրդական տնտեսությունը սակավարժեք բանվորական ուժից և հնարավորությունն առաջի նրան փոխարինելու այն ավելի աշխատանքակ և թարմ ուժով, վորագիսին վերցրվում և գործադրությների և գեռաչափաների կամ արդեն չափահանների շարքից։ Ոգնության գալով մահացածների ընտանիքներին, հնարավորություն և առաջի նրանց անգամներին համապատասխան ուռումն առնելու և պատրաստվելու փոխարինելու հոգնածներին և մահացածներին։

Ահա թե վորքան և մեծ սոցիալական ապահովագրության նըշանակությունը։ Սոցալական ապահովագրությունը ապահում և բարգամիլիոն բանվորներին և ծառայողներին համարյա բոլոր այն գեղքերում, յերբ նրանք հարկադրաբար զրկվում են իրենց դատումից և առվրուստի միջոցներից, յերաշխավորում և նրանց վրա սպնություն հասցնել և զրանով թարմացնում և ասողջացնում և բանվոր գառակարգը և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։

Վարպետի հնարավորություն ունենալ ապահովագրվածներին նպաստներ և թոշակներ տալու, այլև ձրի բուժողնություն հասցնելու պարզ և, գոր պետք և դրամական վորոշ միջոցներ ունե-

Ասալ : Ահա և այդ գրամական միջոցները մեզնում՝ ԽՍՀ Միությունում ստացվում ե բացառապես տպահովադիմներից, այսինքն վարձու աշխատանք կիրառող անձերից և հիմնարկ-ձեռնարկություններից : Իրենք՝ տպահովագրվածները սոցապեանձարկոներին վոչինչ չեն մուտքամբ և գործատերերն ել իրավունք չունին նրանց աշխատավարձից վորեն մաս ուսհելու տպահովագրման համար :

Ահա այս և մեր սոցիոլական տպահովագրության բան է հիմնական ելությունը :

Բոլորովին այլ կերպ եր գրված սոցիոլական ապահովագրության գործը մինչ Հոկտեմբերյան Հեղափոխությունը դոյություն ունեցող կառավարությունների որոք :

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՈՐԵՒՔԵՐԸ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական որենքները նախատեսնում եյին ապահովագրություն միմյան ի՛ գեալ հիմնդության, խեղանդամության, ձննդարձ-րության և թաղման : Այսպիսով այդ որենքները վոչ մի տպահովություն չեյին տալիս վոչ աշխատանքի անկարության և վոչ ել գործադրության դեպքերում : Ցարի որենքներով և ապահովագրվածների լրջանը խիստ սահմանափակված եր և ապահովագրությունը տարածվում եր միայն այն բանվորների վրա, վորոնք զբաղված եյին . 1) Գործարանային արդյունաբերության մեջ, 2) լեռնաբերդյանաբերության մեջ, 3) ելեկտրաքարշի ձեռնարկություններում, 4) ներքին նավագնացության ձեռնարկություններում և 5) մասնավոր յերկաթուղային ձեռնարկություններում : Ապահովագրութից դուրս եյին մնում . ա) մանր ձեռնարկությունները, վորոնցում բանվորների թիվը 20-ից ցածր եր, յեթե չարժիշմեքնաշ յեր գործադրվում և 30-ից ցածր եր, յեթե չարժիշմեքնաշ կար . բ) պետական ձեռնարկությունների բանվորները, դ) կոռուցող բանվորները, դ) գյուղատնտեսական բանվորները, յե) առևտուրական ծառայողները . և զ) տանը աշխատազները : Բացի այդ, ապահովագրությունը չեր տարածվում Միբերում և Միջին Ասիայում աշխատող և վոչ մի բանվորի վրա : Այսպիսով այդ սահմանափակումների հետեւածքով ցարական առելարի և արդյունաբերության մինիստրության հաշիվներից յերեւմ և, վոր Ռուսաստանի 13 միլիոն բան-

վարներից (Համաձայն 1897 թ. ընդհանուր մարզահամարի) ապահովագրման ելին ենթարկվում ընդամենը յերկուս ու կես միլիոն բանվորներ : Փաստորեն ապահովագրված բանվորների թիվը տվելիք փոքր և յեզել . առևտորի և արդյունաբերության բաժնի տրվածանունը 1916 թ. հիվանդանոցային դրամարկղների անդամ և յեզել 1,690,752 մարդ , իսկ մեզանում ներկայումս ապահովագրված են մոտ 9 միլիոն բանվոր և ծառայող :

Ցարական որենքներով սոցիալական ապահովագրության (բացի յեզանդամության դեպքերից) դրամական միջոցների  $\frac{2}{3}$ -ը կամ յուրաքանչյուր ոռուրյուց 60 կոպեկը մուծում է յին իրենը բանվոր ները ,  $\frac{2}{3}$ -ը կամ յուրաքանչյուր ոռուրյուց 40 կոպեկ , զոր վճարում է յին ձեռնարկատերերը :

Այսպիսով սոցիալական ապահովագրության ծախքերի մեծ մասը հոգացվում եր Հենց իրենց բանվորների հաշվին : Նույնիսկ մինիստրական հաշվիներով անդամ տարվա ընթացքում բանվորները և միլիոն ոռուրյուի ավելի պիտի վճարելին , քան ձեռնարկատերերը :

Միաժամանակ հիվանդանոցային դրամարկղների միաւ վարչական միջոցները կազմվում է յին դիմավորապես բանվորների մուծանքներից , 1912 թ. հունիսի 23-ի որենքով պարագանանություն եր դրված ապահովելու ինեղանդամ՝ բանվորներին 13 շաբաթվա ընթացքում , սկսած ինեղանդանալու տուաջին ուրիշ : Այդ որենքով մի նոր ավելորդ բեռն դրվեց բանվորների ուժին , վորովհետեւ մինչ այդ ինեղանդաներին ժամանակամուր անաշխատունակության ամբողջ ընթացքում տպահովերու պարտավանությունը դրված եր բացառապես ձեռնարկատերերի միաւ (որենք 1903 թ. հունիսի 2-ի) :

Ապահովության տեսակետից ել ցարական որենքները շատ քիչ բան ելին տալիս բանվորներին : Հիվանդանոցային դրամարկղների արված նպաստները շատ չնշին ելին . հիվանդ բանվորը յեթի իր ինամքին ապրաղ բնտանիք չունիր , նպաստ եր սուանում իր դառնումի  $\frac{1}{4}$ -ից մինչև  $\frac{1}{2}$ -ի չափով , իսկ յեթե ընտանիքալոր եր , սուանում իր իր գաստումի  $\frac{1}{2}$ -ից մինչեւ  $\frac{3}{4}$ -ի չափով , ըստ վարում այդ չափերով նպաստը տրվում եր միայն 26 շաբաթվա ընթացքում և յեթե հիվանդությունը յերկարում եր , այլևս նպաստ չեր արվում և նաև մհում եր սուանց ողնության : Մնադարերության հե-

տեանքով առաջացած ժամանակավոր անաշատսւնակության նրապատը տրվում եր միայն 6 չարաթ . 2 չարաթ ծննդաբերությունից առաջ առաջ և 4 չարաթ ծննդաբերությունից հետո : Մննդկանին արբարդ այդ նպաստն ել նրա լրիվ գատումից պակաս եր և ամենազդյանալորն այն եր, վոր այդ նպաստը ստանալու համար նախազեռ պետք եր դրամարկղում անդամադրվել, այսինքն մուծանքներ կոտարել առնվազն 3 ամսի ընթացքում, այլապես նպաստ չեր արվի : Հաշմանդամի կենսաթոշակը նույնիսկ այն դեպքում, յեր աշխատավությունը կորած եր լինում լրիվ չափով, դատումի ½-ից բարձր լինել չեր կարող :

Փետրվարյան հեղափոխությունից հետո միայն ժամանակավոր կառավարությունն աննշան փոփոխություն մտցրեց ցարական 1912թ. հունիսի 23-ի որենքի մէջ : Ժամանակավոր կառավարության որենքումն ել, ինչպես ցարական որենքում, մենք տեսնում ենք ապահովագրվածների լրջանի սահմանափակումն : Նոր որենքը մտցրեց արհեստավորների և կառուցողների ապահովագրմանն, մուսնք ցարական որենքով յենթակա չեյին ապահովագրման : Կապահովագրումը տարածեց նաև մանր այն ձեռնարկությունների վրա, վորոնցում վարձու աշխատանք կառավարությունների այն ձեռնարկությունները, որոնք ցարական որենքները աարածում չելլը 20-ից, իսկ չարժիչ մեքենան լինելու դեպքում բանվորների թիվը 20-ից, իսկ չարժիչ մեքենան լինելու դեպքում 30-ից պակաս չեր) : Ապահովագրվածների լրջանից դարձյալ դուրս եյին մնացել, ա) պետական ձեռնարկությունների և յերկաթուղիների բանվորները, բ) զյուղատնտեսական բանվորները, գ) առևտրա-արդյունաբերական ծառայողները, դ) տնային ծառայողները . յե) տնային արդյունաբերության բանվորներ և զ) մինչև 5 թվականի մշտական բանվորներ ունեցող ձեռնարկությունների բանվորները :

Ցարական 1912թ. հունիսի 23-ի որենքով ձեռնարկատերերը մուծում եյին բանվորների մուծանքի  $\frac{2}{3}$ -ը (ամբողջ մուծանքի  $\frac{2}{3}$ -ը), իսկ ժամանակավոր կառավարության որոք այն փոխվեց, վոր ձեռնարկատերերը պարագրվեցին մուծել անքան, վորքոն մուծում եյին բանվորները, սակայն այդ հանգամանքը մի առանձին թիթեառթյուն չըերեց բանվորներին, քանի վոր նրանք այդ ուրենքով չեյին ապատված ոոցապմուծանքներ կատարելու պարտականությունից :

Ժամանակավոր անտշխառունակության (հիվանդության) նրանք սպասների չափն եւ համեմատությամբ շարական չափերի շտամ անշան չափով եր բարձրացված ընտանիքավորի և վոչ ընտանիքավորի նպաստների չափը հավասարեցրված եր և սահմանված դուռմի ½-ից—<sup>2</sup>/4-ի չափով (շարական որենքով միայնակների նըսպասի ամենափոքր չափը հավասար եր զատումի ½-ի նպաստը տալու ժամկետը (աեղությունը) չեր գոփոխված և թագնված եր նույն 26 չարաթը :

### ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍՊՅԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Նախկին կառավարությունների որենսպրությունների որուցիկ տեսությունից անզամ մենք համոզվում ենք մեր բանվորացուղացիական կառավարության որենքների անհամեմատավելությունների մեջ, վորոնք սոցիալական ապահովագրության բնագավառում մարմնացրել են բանվորական դաստկարգի պահանջները, վոր գրգած եյին բանվորական ապահովագրական ծրագրում :

Համարյա թե բոլոր խոչոք գործադրությունների ժամանակ, ոյլ և Պետական Դուռմայի (խորհրդի) իրենց գեղագուտատներին արգած հրահանդներում Ռուսաստանի բանիքորները միշտ առաջարրել են իրենց պահանջը իրազրծել սոցիալական ապահովագրությունը գրգած հետեւյալ հիմունքների վրա :

ա) Ապահովամն բոլոր բանվորների և ծառայողների .

բ) Ապահովումն ապահովագրական բոլոր տեսակի բիսկի գնացքում (այսինքն՝ հիվանդության, խեղանդամության, ծննդարերության, աշխատանքի անկարգության և այլն),

շ) Սոցիալական ապահովագրության բոլոր ծախքերը պիտի հացանապես ձեռնարկաները բացառապես ձեռնարկաները բացառապես անկարգության և այլն),

դ) Սոցիալական ապահովագրության գործը կառուցվելու ապահովագրական բանկավարության ոկրումներով :

Բանվոր դասակարգի այլ բոլոր պահանջները ներկայումս իրազրծված են կյանքում և սոցիալական ապահովագրության մարմնների ամբողջ աշխատանքը վանվում և արհեստական միությունների ընդհանուր դեկավարության և հոկազներուն ներքո :

## ԱՐԵՍՏԱԿՑԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵԸ


Արհեստակցական միությունները անպայմանորեն շահագրսոված են սոցիալական ապահովագրության դործում և սոցիալական ապահովագրական մարմինների դործունեցության վրա հսկողություն ունենալու բառվունքը բախում է հենց այն հանդանությունը, վոր իրոք, սոցիալական ապահովագրությունն անմիջորեն շոշափում և արհեստատակցական միությունների աշխատանքի հիմնական ճյուղերը և եյությունները։ Արհեստակցական միությունները շահագրգոված են նրանում, վոր աշխատավարձը ժամանակին և բավարար չափով տրվի, վոր արհեստակցական միությունների անդամներին ժամանակին ողնություն հասցըմի հիգանդության, ինեղանդամության, աշխատանքի անկարության, ժննդարերության, դործադրկության և այլ դեղքերի ժամանակ։ Արհեստակցական միությունները պակաս չափով չեն շահագրգոված, վոր հիվանդ բանվորը ժամանակին բուժողների համար հանդպատճառ տուն կամ սանատորիո գնու իսպրուրվելու համար և այլն։ Արհեստակցական միությունները շահագրգոված են և նրանում, վոր բանվորն իր կազը արտադրության հետ չխռի (ջրկարի), մուրացիկ չդառնա, դործադրկության ժամանակ օանաբանչ զրադարձունքի տեր մարդք չդառնա, այսինքն շահագրգոված են նրանում, վոր զործադրուրիններին նպաստ տրվի սոցագրանձարկություն և վոր ապահովագրական միջոցներով կազմակերպվի համապատասխան աշխատանքային ողնություն դործադրկության դեմ պարզաբերու համար։

Վերջապես, քանի վոր արհեստակցական միությունները հետևում են, վոր ձեռնարկություններում աշխատանքի անակզի ավելորդ գաղաք կամ բանվորների կողմից կոմայական բացակայության չլինի, այստեղից ել պարզ և, վոր նրանք պիտի բարերար ազդեցությունն ունենան սոցագրանձարկություն աշխատանքների վրա հիվանդությունների սիմուլիացիայի զեմ պայքարելու նկատմամբ։ Վոչ վոքի համար զազտնիքչե, վոր վերջերս համարի են հրապարակ գալիս այնպիսի մարդիկ, վոր շահագործում են սոցագրանձարկան մարմիններին և շափագանցրած հիվանդություններով բազարիում են իրենց ծուլությունը կամ աշխատանքից դիմավոր-

յալ կերպով խռովագիւղ : Աշխատավորին սխալ արձակուրդ տուլը կորող և չուա վհաստկար հետեւնք ունենալ մեր ժողովրդական անունություն համար : Ահա և ինչու բանվորների կամայական բացախայությունների և հիմանդրությունների սիմուլիացիայի վեճ պայքարնեւ : Խնդիրը հանդիսանում է թե սոցազմարմինների և թե արհեստական միությունների կարեռորդույն խնդիրներից մեկը : Այսպիսով մենք տեսնում ենք, զոր սոցազմարմինների ամբողջ աշխատանքը (անխափառելիորեն) ուրարուն կազմած և արհեստական միությունների աշխատանքի հետ և համարդի թե կարմում և վերջինիս մի ժամը : Ենք վորպեսպի արհեստական միությունները խկազես ապահովեն իրենց ազգեցությունը, զեկավարությունը և հակողությունը սոցազմարմինների գործունելիության վրա, իրենք են ձևակերպում սոցազմանձարկղները, կողմանի բարում սոցազմարմինների կոնֆերենցիաներում և համարդարձներում, իրենց միջմութենական կոնֆերենցիաներում և համարդարձներում, չոկում և առաջ քաշում համապատասխան աշխատակիցների սոցազմարմիններում աշխատելու համար և նրանց թեկնածությունը համաձայնեցնում Աշխատկամատի հետ և հաստատելուին, իրենց վերապահելով նրանց հետ կանչելու իրավունքը :

## 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆ-ՆԵՐԸ ԽՍՀ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ներկայումս սոցխալական ապահովագրությունը կյանքում երազործվում և առանձին մարմինների կողմէց : Տեղերում (գաղտնաներում, լրացնական այլն) կազմակերպվում են ողբական ապահովության գանձարկղներ, վորոնք սպասարկում են իրենց լրաններում յեղած ապահովագրվածներին, բացի յերկաթուղային և ջրային փոխադրամկան ձեւնարկություններում ապահովագրվածներից, վորոնց համար կազմակերպվում են առանձին սոցազգանձարկղներ : Սոցապահնձարկղի աշխատանքները զեկավարում են միջմութենական կոնֆերենցիաներում ապահովագրվածների ներկայացուցիչներից ընտրված կոմիտեն : Սոցազմարմինները ապահովագրվածներին ավելի մոտեցնելու նպատակով, սոցազմանձարկղների ըրջաններում, ազելի բանկության վայրերում հիմնվում են սոցապահանձարկղներ և բաշխիչ կայտե-



הערכות ועקבות

הערכות ועקבות

մեր ու լիտորլությունները : Սոցագրկայատնները հիմնվում են այսպիսի ռայուններում, ուր շատ ձեռնարկություններ կան, վորոնցում 200-ից մինչև 2000 բանվոր-ծառայողներ են աշխատում, իսկ լիտորլությունները հիմնվում են այն տեղերում, ուր 50-ից մինչև 250 աշխատավորներ են զբաղված : Ռայոնական և գավառական սոցագրգանձարկղները միանում են կազմում են նահանգային սոցագրանձարկղ : Նահանգային սոցագրանձարկղները փոխարինում են նախկին սոցիալական ապահովագրության վարչություններին, վոր գործություն ունելին տեղական խորհուրդների աշխատանքի սոցագրանության բաժիններին կից : Նահանգային սոցագրանձարկղներին են նահանգային սոցալական ապահովագրության վարչությունների մեջ այն հիմնական տարրերությունը կա, վոր նահանգային սոցագրանձարկղների գլուխն են կանգնած միջմիութենական կոնֆերենցիաներում և համագումարներում ընտրված կոժիունները, մինչդեռ սոցիալական ապահովագրության վարչության գլուխն եր կանգնած աշխատանքի պաշտպանության բարձրի հսկմից նշանակված պետք :

Միութենական Հանրապետության սահմաններում գոյություն ունեցող բոլոր տեղական սոցագրարմինները գործում են Աշխատանքի ֆուզիվրդական կոմիսարիատի ընդհանուր դեկազարությունը, վորին առընթեր կազմակերպված և սոցիալական ապահովագրության գլխավոր վարչությունը : ԽՍՀՄ սահմաններում սոցիալական ապահովագրության ամբողջ գործը զեկավարում է Սոցիալական Ապահովագրության կենտրոնական Վարչությունը (Սոցագկենտրովարչությունը), վորը մտնում է ԽՍՀՄ Աշխատակիութիւնի մեջ :

Փոխագրական թև սառրադաս և թև բարձրագառ սոցագրանձարկղների կոմիտեները կազմակերպվում են բացառապես արհեստակցական միությունների կողմից և ընտրվում յերկաթուղային և ջրային փոխագրության աշխատավորների արհեստակցական միության սայյոնական և լրջ համագումարներում : Գանձարկղների կոմիտեները իրենց աշխատանքները, տանում են համագումարից արհմիութենական մարմնի անմիջական ագրեցության և հոկողության տակ :

Սոցագրանձարկղները իրազործելով պետական պարտադիր սոցիալական ապահովագրությունը, թևն հանդիսանում են պե-

առական իշխանության մարմիններ, պահային ինչպես առեցինք ԱԽՀՄ ոսցիալական ապահովագրության ամբողջ ապագարար դանում և արհեստակցական միությունների և նրանց խորհուրդների աղղեցության և զեկուվարության տակ:

## ՍՈՑԱՊԳԱՆԶԱՐԿՂԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ


Սոցապգանձարկղի աշխատանքը, կայանում և նրանում, վոր նա կազմակերպում և աշխատավորներին ապահովագրական բոլոր առաջակի ոգնություն և հասցնում: Առաջ, նախկին կառավարությունների որոշ, ապահովագրական ոգնության յուրաքանչյուր առաջակի համար առանձին մարմիններ կային, վորոնք տարրեր ոգնություն եյին հասցնում: Հիմանդանոցային գանձարկղները ոգնության եյին գալիս ժամանակավոր անաշխատունակության (հիմանդության) գեղքում, ապահովագրական ընկերությունները ոգնության եյին գալիս խեղանդամության գեղքում: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, սկզբում մեղանում ել գոյություն ունեցին առանձին մարմիններ հատկապես գործազուրկների համար: Ներկայումս ապահովագրական բոլոր առաջակի ոգնությունները հասցնելու պարտականությունը, ժամանակավոր անաշխատունակության, գործազրկության և այլ տեսակի նպաստներ և կենսաթոշակ տալը, կնորոնացած և մի մարմնում՝ Սոցապգանձարկղում և այսպիսով իրազործվում և սոցիալական ապահովագրության միասնականության քաղաքականությունը և նրա առանձին մասերի կապացությունը, վորովհետեւ միննույն կոմիտեն և յաւեռում ապահովագրական բոլոր գործնական և սկզբունքային հարցերը, իսկ մյուս կողմից սոցապահովագրության միասնականությամբ կրնառում են նրա կազմակերպչական ծախքերը, վորագիտական պարզ և, վոր ապագարատի նման կառուցվածքի գեղքում ազնիլի քիչ ծառայողներ են պետք: Սոցապգանձարկղի կոնկրետ աշխատանքը կայանում և նրանում, վոր նա գանձում և ապահովագրերներից (ձեռնարկատերերից) հասանելիք սոցապգճարները և այդ միջոցներով կազմակերպում և բանվորներին և ծառայողներին զրամով և բնականով ոգնություն հասցնելու գործը: Նրանց նպաստներն ու կենսաթոշակներն են վճարում, իսկ բնականով սպառաթրայն հասցնելը կայանում և նրանում, վոր բուժական ոգնություն և հասցրվում, ձրի գեղորայք են տրվում և այլն, ինչպես

և աշխատանքի անկարների համար կազմակերպվում են հանրակացարաններ, վարժական անկարները տմեն ինչ պատրաստի յեն սահմանական գործություններից մի քանիշը կազմակերպել են նաև ճայռաններ, վարժեղից եժանագին կամ բոլորովին ձրի ձաշեր են արգում զարծագուրկներին և այլն:

## ԲՈՒԺԱԿԱՆ ՅԵՎ ՍԱՆԱՏՈՐԱ-ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Սոցազգանձարկդները կազմակերպում են նաև հանգստի տներ և սահմանարիաններ, վորով նրանք պրոֆիլտակտիկային, այսինքն նախազգուշական նպատակներ են հետապնդում: Խսկագեն հաճախ է պատահում, յերբ հիվանդին լավ պարտաններում պահելով ու յով մնունդ արտմագելում կասեցվում է հիվանդության դարձացումը, մինչդեռ վատ պայմաններում հիվանդությունն ավելի բարդանաւմ և յերկարում է: Խսկ հիվանդին չուտ առաջացնելու մեջ առանձնապես շահագրգումած են ձեռնարկությունները, վոր ժամանակավոր անաշխատունակության նպատաներ են տալիս: Սոցազգարմբների յուրաքանչյուր մի կոպեկը պիտի հաշվի տանել և տիրոպես ծախսել, վոր բուն նպատակին ծառայել:

Սոցազգանձարկդները հանգստի տներ, սահմանարիաններ և կուրուրաային (հանքային - ջրերի) ոգնություն կազմակերպելով համեմատ միաժամանակ տմենակատիվ մասնակցությունն անդին ապահովագրության և նրանց ընտանիքներին բուժոգնություն հասցնելու վործի կազմակերպման մեջ: Վերևում արգեն առացինք, վոր ԽՍՀՄ բանվորներին և ծառայողներին բժիշկական սպառագիր հասցրվում և բոլորովին ձրի: Այդ նպատակի համար սոցազգարմբները իրենց զբաժական միջոցներից, վոր գանձում են վարդուու աշխատանք կիրառող ձեռնարկատերերից, վարչ գումար են տրամադրում ժողովրդական առողջապահության մարմններին: Սոցազգանձարկդները շահագրգումած են, վոր առաջապահության մարմբներին հատուկ նպատակով տրված գումարները իսկապես ծախսվեն այն նպատակի համար, ինչ նպատակի համար վոր տրված են, այսինքն ծախսվեն բացառապես ապահովագրվածների բուժողնության վրա: Ահա այդ նպատակով և սոցազգանձարկդները մասնակցում են բուժողնության համար արգող գումարները ծախսելու ծրագիրը կազմելուն, Առամբնե-




բից հայրի են պահանջում թե ծախսած գումարների և թե ազահովադրվածներին հասցրած բուժողնության ժամին:

Ահա սրանք են սոցազգանձարկղների հիմնական և դլխավոր աշխատանքները, վոր Հոկայական նշանակություն ունին բանվարական լայն մասսաների համար. և արհեստուկցական միությունների դլխավոր նպաստակներից մեկն ել լինելու յև սոցազգարմիններին տմբենալայն աջակցություն ցույց տալը: Այդ աջակցությունն և առավել անհրաժեշտ և, վորորհետեւ սոցազգանձարկղները հանդիսանում են, այսպես առած, արհեստակցական միությունների ողնականները աշխատանքի սլաշտագանության դործում:

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄՆ ՅԵԼ ԱՐՁԵՍՏԱԿՑԱԿԱՎԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոցիալական ապահավագրության բնակավառում սոցազգանձարկղների և վոչ մի աշխատանքն այնքան սերտորեն չե կտադրած արհմիությունների աշխատանքների հետ, վորքան գործազրկության ապահովագրումը, վորովհետեւ թե սոցազգանձարկղները և թե արհմիությունները հաճախ ողնությունն են՝ դայիս միւնաւույն գործադրություններին: Թե սոցազգանձարկղները և թե արհմիությունները չահաղորդում են, վոր ողնությունը հասցրվի իսկական գործադրություններին, վորովհետեւ Աշխատանքի բորսայում արձանագրված վոչ բոլոր գործադրություններն են բառիս բուն նշանակությամբ գործադրությունների և թե արհմիությունների դրամական սուղանությունները, այլ և յեղած գործադրություններից սուաջին հերթին պրոլետարական և լեմենտների ապահովության անհրաժեշտությունը, սոցազգանձարկղների և արհմիությունների փախադարձ համաձայնությամբ մի չարք պայմաններ են սահմանել, վորոնցով պիտի առաջնորդվել գործադրությունների նպաստ ստանալու իրավունքը վորոշելիս և նպաստ տալ միմիայն այն գործազրկղներին, վորոնիք համաձայնությամբ առաջնորդվել գործադրությունների համար գործադրություններին: Գործադրիմության նպաստ ստանալու իրավունքը վորոշող պայմանների սահմանների սոցազգանձարկղները և արհմիությունները առարեք մոռեցումներ ունին: Սոցազգանձարկղների համար դլխավորութիւնը գեր և խաղում գործադրությունների վարձու աշխատանքի վորոշ սահմանը, բնուանբույսը, մինչդեռ արհմիությունների համար

Նշանակություն՝ ունի նաև գործազուրկի որհեռակցական միությաններին՝ անդամակցելու. ստամբ: Վերջիրավաժ պատճեններին նշանակությունն առանուամբ նաև գործազուրկի ընտանեկան գրությունը և սոցազմարժիններն ու արհմիությունները սահմանել են գործազրկության հիմնական նպատակը. Հավելումներ համելապես բնատանիքի անդամների համար: Սակայն նախ քանի գործազուրկիններին հասցըրված սկզբանին իսկսկությունը անհրաժեշտ է, թեկող համառատակի, ոպարզել ժամանակակից գործազրկության բաւ «գեմքը», նրա հիմնական բնույթը: Արդ վորոնք են ժամանակակից գործազրկության աղբյուրները:



Մեր գործազրկության գլխավոր ազբյուրը պյուղական բընակության գեղիք քաղաք Հոսելու աճաւմն է: Նոր անտեսական քաղաքականության սկզբի տարիներում գյուղից քաղաք ելին գալիս գյվաղորապես վորակյալ բանվորները, վորոնք պյուղ ելին գնացել ուղման կոմմունիզմի տարիներում: Այժմ պյուղ գնացած քաղաքը բանվորների մեծադույն մասը վերապարձել եր բանվորական գոտիներին, ստկայն գյուղական բնուկության հասնելը դեպի քաղաք չեւ դադարել: 1928 թ. աշխարհորդանիրում ար-

հանագրվածներից գյուղերից յեկածների թիվը հասնում եր 18 տոկոսի, 24 թ.—10 տոկոսի, 25 թ. ինում և 16 տոկոսի, իսկ 1926 թ. Աշխարհաներում արձանագրվածների 20 տոկոսը կազմում են այնպիսի գյուղացիներ, զոր տուջ յերբեք չեն աշխատել քաղաքներում արգյունաբերության մեջ:

Այդ տնօգագրում հոսանքի հիմնական պատճառը գյուղացինեան տնաեսության տեխնիկայի ցածր լինելին է: Մեզանում մինչև որո քանի զեռ գոյություն ունի յեռամյա սերմնափոխությունը, գյուղատնտեսությունը յերբեք չի կարող ապրուստի միջոց հայթյթել գյուղացիական ամբողջ բնուկչությանը: Ահա այդ պատճառով ել գյուղացիությունը լրացնուցիչ աշխատանք և վարժուած կամ քաղաքի արդյունաբերության մեջ և կամ տնայնությունության և այլ գործերում, տալով աշխատանքի շուկային անպատճառ և անվորակ ուժ: Մինչ պատերազմ շրջանում գյուղացիական տնաեսություններում աշխատանք չգտնող բանվորական ուժի ավելցուկը կազմում եր 4 միլիոն շափահաս բանվոր: Այդ մասսայի մի մասը իր ուժը կիրառում եր գյուղացիական արտադրության մեջ, իսկ մեծ մասը զիմում եր քաղաք, լցնելով այն գործազուրկներով, իսկ թե վորքան այլպիսի գործազուրկներ կային, ավելի տուջ յերբեք հաշվի չեր առնվում:

Գործադրկության յերկորդ աղբյուրը բանվորական աճող սերնդն է: Քաղաքի 22,5 միլիոնանոց բնակչության աճեցողությունը տալիս և տարեկան 350 հազար շափահաս բանվոր, զորի մեծագույն մասը իր ուժի կիրառումն և վորոնում արդյունաբերության և այլ վարձու աշխատանքների մեջ: Իսկ արդյունաբերությունը առայժմ զեռ ի վիճակի չե այդ բոլորին աշխատանք տալու:

Ժամանակակից գործազրկության յերրորդ աղբյուրը հեղտիւնական հետևանքով ամբողջ հասարակակարգում առաջացած փոփոխություններն են: Հազարամբոր շինովնիկներ, հոգաբավոր սեփականաբաներեր և այլ վոչ աշխատավորական և յեմենաներ, զեկվերվ յեկամուտից ստիպված եյին ապրուստի միջոցներ վարնել, տեղափորվելով խորհրդային ծառայության մեջ: Բուրժուազիայի հետ միասին ապրուստի միջոցներից զրբկվեցին և այն հազարամբոր ժարդիկ, զոր ապաստվորում եյին նրանց իրեւ ծառաներ, լուկեյներ, դանապաներ և ոլլին:

Առեարի ստհմանափակումը, անայնապարծության կրծառաւմը, այդ բոլորը աշխատանքի շուկա նկատեցին նորանոր բանվարական մեծաքանակ ուժ: Ճիշտ է, այդ ուժը, վոր բազկացան եր մինիստրական գրասենյակների (կանցելարյաների) չինունիքիներից, առևտրականներից, չարչիներից, մակլերներից և այլն, չիր բայարարում ժողովրդական անտեսության պահանջներին, բայց ուղղմական կոմունիզմի ժամանակ, ճերր բանվար ձեռքի կարիքն եր զգացվում, գրանց նշանակալի մասը խորհրդացին հիմնարկ-ձեռնարկություններում տեղավորվեց և դառնայ «վորակյալ» բանվոր «անփոխարինելի սպեց (մասնագետ)» և այն, վորոնցով և ուսմացան մեր գործարանների և հիմնարկ-ձեռնարկությունների հաստիքները:

Նոր անու քաղաքականության որից սկսած խորհրդային իշխանության առաջնակարգ խնդիրներից մեկը, առանց վորի լուծման անհնարի եր վերականդնեցնել անտեսությունը, հանդիսանում եր մեր հիմնարկ-ձեռնարկությունների ուսմացած հաստիքների կրթատան և թե զեկավարող մարմինները թե ձեռնարկությունները անպեսք ու անվորակ տերբերից ազատելու խնդիրը:

Ինպատմական կոմմունիզմի շրջանում, առաջ յիկած մի շարք հիմնարկություններից, շատերը բոլորովին փակվեցին, մյուսները մի քանի անդամ կրծառեցին իրենց հաստիքները:

Հաստիքների կրծառումը մինչև որս ել զես չի վերջացել և այժմ, խնայողական ուժիմի նշանաբանի տակ, տեղի ունեցող կրծառումը կազմում և ավարտական ողակը Խորհրդային իշխանության բանվորական ապարատի առողջացման գործում և ազատաւում և նրան գործի համար անպետք աշխատակիցներից, վորոնք «առեգալորվել» են այսուղ ուղղմական կոմմունիզմի տարիներում:

Հաստիքների կրծառման և աշխատակիցների կազմի լավացման հետեանքը յեղակ այն, վոր գործադուրիների շարքերը լրջ-վեցին բաղմաթիվ սակայ պիտանի աշխատավորներով, վորոնք չեն կարողանում իրենց համար համապատասխան աշխատաքանել, մինչդեռ այս բարյարակ այն բարյարակ (ավելութ բերոն) հետ միասին գործադուրիների շարքերում ունենք բավականաշատ թվով ավելի պատրաստված բանվորական ուժ, վորը կօգտագործվի մեր անտեսության հետաղա դարձացման ընթացքում:

Գործազրկության մեկ և բավական ուժեղ ազբյուրը կանոնց կողմից առաջարկվն աշխատանքն է : Կանանց աշխատանքի ողակործումը տրդյունաբերության մեջ առանձնապես զարգացած պատերազմի ժամանակի, յերբ պատերազմի դաշտ զնացող բանվորների փոխարեն զազդյաների վրա աշխատում է յին նրանց կանայք և ողջիկները : Պատերազմը վերջանալուց հետո տղամարդիկ վերադարձան իրենց գաղղահաներին և արգյաւնաբերության մի չարք ճանակերից գուրու մզվեցին կանայք : Արգյունաբերության մեջ աշխատազ կանոնց ուղղուր իշավ և կանայք անցան զորագուրկների շարքերը և խռացրին նրանց :

Ահա զրանք են աշխատանքի բարսայում, զորպես զործազուրկ ցուցակագրված հիմնական չերտերը : Այսուղից և զործազուրկների առանձին չերտերի աղահովման զործին տարրեր մոտեցում և լինում, զորովհետեւ չզետք և մոռանալ, զոր զործազրկության աղահովմագրության հիմնական խոնդիրը կայանում և վոչ թե նրանում, զոր սպառնելուն հաօցնի տյու կամ այն առանձին զործազուրկին, այլ նրանում, զոր կարողանաւ ժողովրդական տնտեսություն համար քայլայումից և աղահովասկարդությունից բանական ուժի անհրաժեշտ կադր պահպանի :

Մեզ մոտ նպաստի իրավունքից ոգուվում են այն զործազուրկները, զորոնք մինչեւ զործազրկությունը կատարել են վորեա վարձու աշխատանքը : Այդ նշտանակում և, զոր զյուղը թողած և քաղաք յեկած գյուղացին նպաստ ստանալ չի կարող : Ենք այդ համարակալի յեւ նա աղահովմագրված չի յեղել, նրա համար աղահովմագրական մուծանքներ չեն վճարել և չեյին կարող վճարել : Նրա աղահովումը ողցիալական աղահովմագրության սիստեմի զործը չեւ, զբա համար կան սոցիալական աղահովմագրվածիններ (Սոցապժողկումատ), զորոնք հոգս են առանում զոյ աղահովմագրվածների մասին : Վորակյալ բանվորները և մասնագիտական կրթություն ստացած մտավոր աշխատավորները (բժիշկները, ճարտարագետները, դյուլատանեսները և այլն), զոր աշխատել են իրենց մասնագիտությամբ, իրավունք ունեն զործազրկության նպաստ ստանալու անկախ նրանից, թե վորքան ժամանակ են վարձու աշխատանք կատարել . իսկ ծառայողներից և անվորտ կամ կրտավորակյալ բանվորներից կարող են նպաստ ստանալ միայն նրանք, զորոնք զորու ժամանակ վարձու աշխա-

տառնք են կատարել : Եպաստ ստանալու իրավունք անհեն այն ան-  
վորակ բանվորները, վարոնք արհմիության անդամ են, և յեթե  
վարձու աշխատանք են կատարել մեկ տարուց վոչ պակաս ժա-  
մանուկամիջոցում, իսկ նրանք, վորոնք արհմիության անդամ  
չեն, յեթե վարձու աշխատանք են կատարել յերեք տարուց վոչ  
պակաս . արհմիության անդամ՝ ծառայողները, յեթե աշխատել  
են վարձով յերեք տարուց վոչ պակաս, և արհմիության վոչ ան-  
դամները, յեթե աշխատել են վարձով չինչ տարուց վոչ պակաս :  
Աշխատավորական այդ մեծ ոտածի պահանջը քացատրվում է մեր  
դրության վորոշ առանձնահատկություններով : Տվյալ գեպքում  
աշխատավորակություն ունի մեր որենսդրության գասակարգային բնույ-  
թը, վոր ուղղված և առաջին հերթին զուտ պրոյետարական տար-  
բերի շահերի պաշտպանությանը : Անվորակ և անվատրաստ կար-  
ճառեն . և պատահական աշխատանք կատարած բանվորը, վոչ աշ-  
խատավորական տարբերից առաջ յեկած ծառայողը, վորը ձեզափո-  
խության ժամանակ քայլարդիկով տնտեսապես հարկադրվել և վար-  
ձու աշխատանքի անցնել և կամ վարձու աշխատանքի յե անցել, վոր-  
պեզզի աշխատավորին տրամադրված արտօնությունները վայել-  
ագահովության սպահանջ դնելու իրավունքը կունենային այն գեպ-  
քում միայն, յերբ մենք այնքան հարուստ լինելինք, վոր հնարա-  
վորություն ունենայինք բոլորին ալվահովելու : Բայց յերբ մեր  
միջոցները սահմանափակ են և ստիպված ենք ընարություն անել,  
թե ումը նպատառ տալ, ապա հառկանալի յե , վոր Խորհրդային  
սրենքը պետք ե գերազանի բանվորների ինդուստրիալ խմբակները :  
Արհմիության վորենքն անդամի մեկ կամ յերեք տարվա և անկազ-  
մակերպ բանվորների և ծառայողների ավելի յերկարատես վարձու  
աշխատանքն արգեն բավականաչափ մեծ տպացույց ե , վոր նրանք  
պրոյետարական կադրերին են պատկանում : Որենսդրությունը այ-  
նուամենայինից զործագութեների մի վորոշ խմբակների համար  
բացառություն և անում, տարլով նրանց նպաստ ստանալու իրավունքը  
անկախ նրանից, թե վարքան ժամանակ են նրանք աշխատել մինչեւ  
դրժապրեկությունը : Այդ շարքին են պատկանում . 1) մինչեւ 18  
տարեկան հասակ ունեցող անչափահասները, 2) մինչեւ 16 տարե-  
կան վրքահասակները, յեթե նրանք աշխատանքի յեն մտել աշխա-  
տանքի տեսչի թույլատվությամբ, և 3) Կարմիր Բանակից և Նա-  
գատարմիղից արձակածները, վորոնք զորակուցվել են անմիջապես

վարձու աշխատանքից : Այդ բացառության նպատակը միանգումայն պարզ է : Անշափահասների նկատմամբ—ավելի լավ գրություն մեջ դնել աճող բանվոր սերունդը և տպահովել նրան, վոր փոխորինելու յի ներկայումս աշխատող կաղըրերին, իսկ բանակից և նովատորմիղից արձակվածների նկատմամբ—իրադործել պետության դարականությունը՝ ամեն կերպ ընդուռաջել բանվարիներին, վորոնք հանդեպ Հանրապետության կատարել են իրենց պարտականություններ :

Վերևում հիշված պայմաններին բավարարող գործազուրկներից միայն կարիքավորներին և նպաստ արվում, այսինքն նրանց, վորոնք զուրկ են ապրուստի միջոցներից ։ Հունեն կողմնակի գտնումն կամ յիկամուտ վորեն դույքից, տնօյնագործությունից և այլն :

Անհրաժեշտ և հասկանալ, վոր մեր որևէներով Արհմիությունից նպաստ ստանալը գործազուրկներին չեն զրկաւմ գործազրկության նպաստ ստանալու իրավունքից : Միությունները ևս նույն վերաբերմունքն ունեն և հաճախ նպաստ են տալիս ապահովագրություն դանձարկղից ոգնություն ստացող գործազուրկներին :

Ապահովագրական դանձարկղներից արվող նպաստների շափր կախված և նրանից, թե վո՞ր կատեզորիքայի գործադուրի և այլայլ անձը : Բոլոր գործազուրկները համեմատ իրենց վորակի բաժանվում են 3 կատեզորիքայի գործազուրկների դասավորումը բայ կատեզորիքաների կատարում և Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհուրդը, հաջածայնեցնելով այն Արհմուակցական Միությունների հետ :

Էնտանիքավոր գործազուրկներին հավելյալ նպաստը արվում և ընտանիքի հետեւյալ անդամների համար . ա) 16 տարիքի չհասած անշափահաս զավիներին, իսկ յեթե մեծ են, այն գեղքում միայն, յեթե անաշխատունակ են դատել մինչ 16 տարեկան հասակը . բ) ծերունի ծնողներին, յեթե նրանցից մայրը 50-ից, իսկ Հայրը 55-ից սարձր տարիք ունին և առանձին դատումն կամ յիկամուտ չունին ու փանառեն ապրում են գործազուրկ վորդու հաշվին :

Գործազուրկին արվող համնական նպաստի և բնտանիքի համար արվող հավելյալ նպաստի գումարը չի կարող նրա վերջին 3 ամսվամբ սեղման միջին աշխատավարձի 50 % -ից ավելի լինել :

Յեթե գործազուրկ են յերկու ամուսիններն ել, ապա յուրաքանչյուրը նրանցից սուանձին և ապահովում, ըստ վորում դավակների համար հավելյալ նպաստը տրվում և ավելի բարձր չափով հիմնական նպաստ ստացողին, իսկ ծնողների համար հավելյալ նպաստը տրվում և ամուսիններից յորագուշուրից տուոնձին իր ծնողների համար:

Յեթե ծնողները մի քանի գործազուրկ դավակների խնամքի տակ են յեղել, վորոնք միատեղ են ապրում, ապա հավելյումը տրվում և գործազուրկներից նրան, վորը սուաջինն և դիմել հավելուս սուանալու համար: Գործազրկության նպաստը նշանակվում և գիտում տալու որից, բայց վոչ չուտ քան Աշխատանքի Բորսայում, իսկ ոյն վայրերում, վորտեղ Աշխատանքի Բորսաներ չկան համապատասիրան միությունում արձանագրվելու որից և վոչ չուտ արից, մինչ վորը գործազուրկին աշխատատեղից լուծարքի նպաստ և վճարված:

Այն գործազուրկներին, վորոնք թողել են աշխատանքը իրենց կամքով, առանց լուծարք ստանալու իրավունքի (Տես Հոգ. 46 Աշխատանքի Որենոգրքի), գործազրկության նպաստը տրվում և վոչ չուտ քան վարձու աշխատանքը ընդհատելու որից մեկ ամիս անցներաց հետո:

Գործազրկության նպաստը տրվում և վորակյալ բանկուրներին և մասնագիտական բարձր կրթություն ստացածներին առարին 9 ամիս, սակայն գործազրկության մեջ ամբողջ շրջանում վոչ ավելի բան 18 ամիս, իսկ մյուսներին տարին 6 ամիս և գործազրկության մեկ ամբողջ շրջանում վոչ ավելի քան 12 ամիս:

Նպաստ տալն անմիջապես գաղաքացվում և այն որից, վոր որը վոր գործազուրկը աշխատանքի յի անցնում, անկախ այն բանից, թե նու քանի ամիս և նպաստ ստացել: Գործազրկության նպաստ ստանալու իրավունքը և համապատասխան կամեզօրիսյում դատվելու հարցը վորոշում և հատուկ կարմուծ «գործազրկության նպաստ նշանակող հանձնաժողովը», վորի նախազանքը Ապահովագրական ֆանձարկողն ներկայացուցիչն և, իսկ յերկու անդամներից—մեկը՝ Աշխատանքի Բորսայի և մյուսը՝ Որհմությունների ներկայացուցիչը:

Այսպիսով ուրեմն Արհեստակցական միաթյունները, բայց այն աղդեցությունից, վոր ունեն գանձարկղների կոմիտեներից ներկայացուցիչը:

րի վրա դործապարկների ազգահովագրման դործում, վարոնց վարչությամները հիշյալ կոմիտեների համար պարտավոր նշանակության ունին իրենց ներկայացուցչի միջոցով անմիջորեն մասնակցում են նաև գանձարկղի աշխատանքներին այս կոմիտին դործագուրկին նապարա բաշխելու դործում:

Գործազուրկների մեջ կան մեծ թվով միության անդամներ: 1927 թվի սկզբներում Աշխատանքի Բորսայում հաշվվում եր մոռ վեցհարյուր հազար միության անդամ:

Միության անդամ դործազուրկների այս թվի մեջ մտնում են նաև այն բանվորները, վորոնք ամբողջ աշխատին լրիվ չեն աշխատում, ինչպես որինակ կառուցողները և գյուղատնտեսական բանվորները:

Աշխատանքի Բորսայում ցուցակադրված միության անդամ դործազուրկներից մեկ հարյուր հիմուն հազարից ավելին կազմում են ծառարդողները:

Ընդհանրապես Միության անդամ դործազուրկների մեծ քանակությունը բացառովում և առանձին ձեռնարկություններում աշխատողների հաճախակի փոփոխմամբ զանազան պատճտուներով՝ հաստիքների կրծատման, աշխատանքային կարգապահության խախատման, ժամանակավոր աշխատանքների վերջանարկ և հիմանդրության սպատառով:

1926 թ. ընթացքում, մեր ձեռնարկություններում տեղի ունեցած բանվորական կազմի թարժացման, հետևանքով մոռ յերկու հարյուր հիմուն հազար արտադրողական խմբի բանվորներ կըրճատվեցին, վորոնք և արձանադրսիցին Աշխատանքի Բորսայում: Այս թիվը համարյա ամբողջովին համապատասխանում եր արտադրողական խմբի Արհմիության անդամ դործազուրկների թվին:

Արհմիությունները առաջին հերթին և գլխավորապես ոգնության են հասցնում միության գործազուրկ անդամներին, վորոնք միութենական գծով ավելի մեծ ստաժ ունին:

Ողնություն հասցնելու գեղգում ուշադրություն և դարձվում միության անդամ դործազուրկի ընտանեկան գրաւթյան և անտեսականի վրա—պարզելով նրա տարիքի շափը: Յուրաքանչյուր Միություն ազգահովում է իր գործազուրկ անդամներին իր միջնորդի և գործազուրկ անդամի տնտեսական դրաւթյան համե-

Տառականությունների միությունը, վոր ամենից շատ պարծազուրկ անդամ ունի, ողջություն և հասցենում իրեն դործապուրկ անդամների համարյա կեսին: Մետաղագործների միությունը—դորժադուրկ անդամների մեջ յերրորդ մասին:

Դործազուրկ անդամներին ողջություն հարցնելու համար Միությունը զվարավուապես ոգոսվում և այն միջոցներից, վորոնք կազմվում են միության աշխատող անդամների կամավորություններից հաղուս դործազուրկ ընկերների: Բացի այդ, Միությունն այդ նորանակի համար վորոշ գումար և տրամադրում են իր բնականության միջոցներից (անդամավճարներ):

Արհմիությունների դործազուրկ անդամներին առանձին որ միությունների գծով արված նպաստի չափերը տարրեր են և առանձիւմ են ամսեկան քան ուրերա միջն:

Պետք են նշել, վոր մեր դործազրկության յուրահասուկ քառութը թերազում և մեղ կիրառել մի շարք զանազան միջոցներ նրան զեմ ուայքարելու համար: Դեռ անցյալ տարվա ընթացքում դործազրկության զեմ մաքառելու միջոցների թիվը և նրա վրա ծախսված գումարները հասնում են առաջին չափերի: 1926 թ. ամսային ամիսներում յուրաքանչյուր սր հասարակական աշխատանքներով զբաղված եյին մոտ 30.000 մարդ, զանազան կուլեկտիւններում աշխատում եյին մոտ 85.000 մարդ, նորանա ստանում եյին 320—340 հազար դործազուրկ, մոտ յերկու հազար դործազուրկ վերապատրաստվեցին և վերջապես ահազին թվով գործազրկությունը լրիվ լիկվիդացիայի յենթարկելով իրենց գործազրկությունը ընդունվեցին մշտական աշխատանքի արտադրութականության և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի մեջ: Յեթե չհաշվեր այն ծախսները, վոր կառարվել են գյուղական տնտեսությունը լրացնելու, յերկիրը ինդուստրիալիզացիայի յենթարկելու, գաղթականությունը անդամների առջական հանուավորելու հարցը կանոնավորելու նորանակով՝ տնտեսական և պետական խոշոր նշանակության ունիցող ծրագիրը կյանքում իրագործելու համար, վորի հետեւնքով զգալիորեն պակասում և գործազրկությունը, այն ժամանակ դարձյալ կ'առնեննեք, վոր 1926 թվին հատկապես գործազրկությանը ողջնելու նորանակով համատական նախանական ավարտիների ժամանակած և:

1.	Գործադրկության նպաստ առաջաւ համար	40·500·000 ռ.
2.	Հասարակական աշխատանքների համար	10·500·000 >
3.	Գործազուրկին կոլեկտիվն կազմակերպելու 1·800·000 >	
4.	Գործազուրկներին պատրաստելու և վերա-	
	պատրաստելու համար	1·200·000 >
5.	Կորեսպոնդենտացին	500·000 >
6.	Գործազուրկների հանրակացարանների, ճո-	
	շարանների վրա	100·000 >
7.	Ռդնության գանձական այլ ձևերի համար	2·500·000 >

Ընդունենք ծախսված և 57·100·000 ռ.

Այս գումարը կազմվել է հետեւյալ ձևով՝ մոտ 46·500·000 սուբյեկտ բաց և բողել ապահովագրության կենարանական վարչությունը, 6·000·000 սուբյեկտ պետքաշեյի արածագրած դաշտին, ինչ 4·600·000 սուբյեկտ տվել են տեղերբ Գավգարծկոմները, իրենց բյուջեյից:

Այսուղի մենք չենք հիշում այն հոկայտական գումարները, վոր տրվել են աշխատանքներին կոլեկտիվներում աշխատավարձի ձևով և բոլոր այն միջոցները, վոր կիրառվել են տեղերում և հաշվառման չեն յնեթարկվել:

Այս բոլորը ահազին ստաֆիմություն և համեմատած առաջիւ տարբների հետ:

Բոլորվին պարզ է, վոր գործադրկությունը վերացնելու դոր-  
ծում հիմնական ազդակը, զա ժողովրդական անտեսության  
դիմավոր ճյուղերի լավացումը՝ բարձրացնելու և ստաֆին հեր-  
թին արտադրողականության և գյուղական անահուաթյան:

Մեր գործադրկության բնույթը մեր յերկրի արտադրույ-  
կանության բերքեսախված ճնշված դրության կամ անտեսական  
ճգնաժամքի և զրազված բանվորական ուժի կրծքաման հետեւյ-  
քը չե, այլ նա հետեւյք է մեծ թիվով գյուղից քաղաք յեկադ,  
նույն տեղական բնակչության նոր շերտերի կողմից աշխատանքի  
ստաֆարկի: Այս յերեսույթի հետ միասին տեսնում ենք, թե  
ինչպես սիստեմատիկորեն և անընդհատ անում և դարձնենում  
են ժողովրդական անտեսության, հիմնական ճյուղերը (արտո-  
գրության, գյուղական անտեսության, արանդույթի), յերկրի  
ընդհանուր ապրանքաշրջանառությունը, բանվոր դասակար-

ԴԵ ԹԻՎՐ և նրա անսահմական ու կուլտուրական բարեկեցությունը :

ՄԵՐ գործազրկության բնույթը և եյությունը, նրա գեղագիտական մեր սևեցած միջոցների սղությունը ստիպում են ապահովագրական մարմիններին և Արհեստական Միություններին տառածին ուշագրություն դարձնել, վոր ապահովեն ըստ կարելույն մեծ թվով խսկական գործազրկություններ, այսինքն աշխատանքից զրկվող բանզորական հին կադրեր, և վոչ թե անզործ մնացած այն նոր բանզորները, վորոնք յեկել են գյուղից աշխատանք գտնելու։

Այս ուղղությամբ աշխատելու համար առանձնապես կարենք և ամենասերտ կազ սահմանել ապահովագրական մարմինների և Արհեստական Միությունների միջև։

## ԻՊՉՈՒԾԱԿԵԼ Խ ԳԼՈՒԽՆԸ

Մշակման հիմնական նպատակն է՝ պարզել սոցիալական ապահովագրության բուն եյությունը և նշանակությունը դաստիարային տեսակետից։ Այդ պետք է կատարել ծանաթանալով Սոցալական Ապահովագրության մարմինների բնույթի և նրանց տարած աշխատանքի, ու նրանց հերթական խնդիրների հետ։ Պետք է առանձնապես մանրամասն մշակել գործադրկության դեմ պայքարելու հարցը, կանգ առնելով կիրառվող միջոցների և գործադրությիների սպասարկման վրա թե սոցիալական ապահովագրության գծով։

Պարզելով Սոցիալական Ապահովագրության և յությունը՝ մեծ ամառնականների առպահովագրական վոչ կրծաս ծրագրի իրականացումը պարզելուց հետո, պետք է ուշադրություն դարձնել սոցիալական ապահովագրության և Արհմիությունների գործներության կապին և ապահովագրական գործում խնայողությունը՝ սողջ ամենիմ անցկացնելու նկատմամբ մասնավեանների մասնակցության նշանակությանը (պայքար սիմուլիացիայի դեմ, և այլն)։ Այդ հնարավորությունը և անհրաժեշտությունը բջիջում և մեր սոցիալական ապահովագրության թե և յությունից և թե նրա կառուցգաճքից, վորը հենվում և ապահովագրվածների ինքնուրութուններության վրա (միությունների և բանվորների մասնակցությունը սոցատմարմինների ընտրություններում)։ Առանձին ուշադրություն պիտի դարձնել կարենորագույն հարցերից մեկին, վոր կապված և թե կաղմակերպչական աշխատանքի և թե Արհմիությունների պաշտպանողական գործուներության հետ՝ դրանք և արդյունաբերության և նրա դեմ պայքարելու հարցին։ Պետք է ուշադրություն դարձնել կարենորագույն հարցերից մեկին, վոր կապված և թե կաղմակերպչական աշխատանքի և թե Արհմիությունների պաշտպանողական գործուներության հետ՝ դրանք և արդյունաբերության ճգնաժամի հետեւանքով (արդյունաբերությունը զարգանում և աճում և) այլ գլխավորապես արդյուններ և գյուղերից հոսող բանվորների ամելցուկի։ Գործադրկության դեմ պայքարելու հսմար պետք է հասունակ և ընդհանուր միջոցներ մշակել, ուշադրություն դարձնել ինդուստրիալիզացիայի դյուզացիական անհեռություններում ավելի արդյունավետ կուլտուրայի անցնելու նշանակության վրա։ Այս բոլորի հետ միասին պետք է ի նկատմի առնել նույն այն անմիջական ողերություններ, վոր հաօցրվում է

գործադարձակիներին Սոցապմարժինների և Արհմիությունների կողմէց :

Մշակելով Զ-րդ Վլուխը, պետք և նրան պատակարձային առանձին կապել նախորդ (աշխատանքի պաշտպանության) գլխիչ էնու :

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Հաշվի առնել, թե տեղական ձեռնարկությունում քանի մարդ և ապահովագրական բիսկի յենթարկվել և պարզել, թե սոցապգանձարկդը ինչպիսի ոգնություն և հասցըրել նրանց :

2. Կազմել սինմա «Ապահովագրվածների չրջանը» և «ըրիսկի տեսակները» :

3. Ծանոթանալ Սոցապգանձարկդի աշխատանքների հետ :

4. Կազմել սոցապմարժինների և արհմիությունների հետ ունեցած փոխհարարելությունների սինման :

## ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ յև ԽՍՀՄ-ում ամեն մի վարձու աշխատավոր առանձինվարդում :

2. Ինչո՞ւ պիտի ապահովագրել ի հաշվի վարձողի :

3. Սոցիալական Ապահովագրաւթյան որինակությամբ ինչպիսի նպաստներ են նախատեսնված :

4. Ինչպե՞ս և իրագործվում արհմիությունների զեկավարությունը սոցապմարժինների և նրանց գործունեյությունն նկատմամբ :

5. Սոցապմարժինները և Արհմիությունները ինչպիսի՝ միջոցներ են ձեռնարկում սիմուլացիայի դեմ պայքարելու համար :

6. Ինչի՞ց և առաջանում գործազրկությունը ԽՍՀՄ-ում :

7. ԽՍՀՄ-ում գործազրկությունը ինչպիսի՝ բանվորներից են կարգմած :

8. Ինչո՞ւմն և արարհայտվում արհմիությունների մասնակցությունը պետական մարժինների կողմէց վարժապրկություն դեմ պայքարելու համար տարբող աշխատանքներում :

ԼՐԱՅՈՒԹԻՉ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԲԻԶ ՊԱՏՐԱՍՎԱԾՈՒԵՐԻ ՀԱՄԱՐ

- \* «Хрестоматия по профграмоте», вып. II, бес. IX, вып. I, бес. V.
- \*\* Бригадиров — Старый страховщик. Изд. «Вопросы Труда».
- \* Б. Файнгольд. — Задачи фабзавкомов и социальное страхование.

ՀԱՅ ԱՏՄՐԱՍՎԱԾՈՒԵՐԻ ՀԱՄԱՐ

- \*\* Забезин. Теория социального страхования.
- \* А. Чекин. — Введение в социальное страхование.
- \*\* А. Штейнберг. — Что дает рабочему социальное страхование.
- \* Любимов. — Социальное страхование в прошлом и настоящем.
- \* Я. Гиндин. — Безработица в СССР (доклад IV Пленуму ВЦСПС). Изд. «Вопросы Труда».
- \*\* Отчет ВЦСПС VII Съезду (раздел о безработице).
- \*\* В. Куатов. — Безработица у нас и на Западе.
- \* Ело же. — Регулирование рынка труда и борьба с безработицей.





104.

ԳԻՆԸ ՅՈ ԿՈՄ.

A 11  
23949